# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

**ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի կարիքների համար «ՇՄԱՀ-ԲՄԱՇՁԲ-24/21» ծածկագրով բաց մրցույթի ձևով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստ**

գ. Ախուրյան

« 23 » հուլիսի 2024թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

*Հանձնաժողովի նախագահ՝* Հրաչյա Զինոյի Սահրադյան /Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի գլխավոր մասնագետ/

*Անդամներ՝* Գագիկ Լեռնիկի Մկրտչյան /Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի առաջատար մասնագետ/

*Հանձնաժողովի քարտուղար՝* Ինգա Հովհաննեսի Մարտիրոսյան /ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ/

**«ՇՄԱՀ-ԲՄԱՇՁԲ-24/21» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և արդյունքների ամփոփման մասին.**

Գնային առաջարկ պարունակող ծրարները բացվել են ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի, Գյումրու խճուղի 42 հասցեում: Գնման առարկա է հանդիսանում՝ **Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Կապս բնակավայրի մանկապարտեզի շենքի կառուցման աշխատանքներ**ը.

## 1. Բաց մրցույթի հայտերի բացման մասին

(Սահրադյան Հրաչյա)

1.1. Ընդունել ի գիտություն

**ա/** սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| N | Մասնակցի անվանումը | Գտնվելու վայրը | Կապի միջոցը<br>էլ.փոստ, հեռ.համար |
|---|---|---|---|
| 1 | **«Անդրեաս և ընկերներ» ՓԲԸ** | ՀՀ Շիրակի մարզ ք. Գյումրի Լ. Մադոյան 287 | sos.andreasyan@mail.ru<br>հեռ.՝ +374 98 41 78 52 |
| 2 | **«ԿԻՐ-ՔԱՐ» ՍՊԸ** | ՀՀ Շիրակի մարզ ք. Գյումրի Կորի 33 փող., տուն 11 | kir.qar@mail.ru<br>հեռ.՝ +374 98 56 58 58 |

բ/ **Բաց մրցույթի** հայտարարությամբ սահմանված՝ ծրարների կազմման և ներկայացման պայմաններին չհամապատասխանող հայտեր չեն ներկայացրել:

1.2. **Բաց մրցույթի** հայտարարությամբ սահմանված՝ ծրարների կազմման և ներկայացման, բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը **բաց մրցույթի** հայտարարությամբ սահմանված պայմաններին նախնական տվյալներով.

- Բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտը համապատասխանում են հրավերի պահանջներին.
- Բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտում հրավերով նախատեսված բոլոր փաստաթղթերը առկա են.
- Բոլոր ներկայացված փաստաթղթերը կամված են բնօրինակից և մեկ օրինակ պատճենից:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ 0:**

1.3. Հանձնաժողովի նիստը նախագահող՝ Հրայր Սահրադյանը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները մեկ թվով արտահայտված:

| N | Կազմակերպության անվանումը | Նախահաշվային արժեքը թվերով (տառերով) | Ինքնարժեք /տառերով և թվերով/ | ԱԱՀ** /տառերով և թվերով/ | Ընդհանուր գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | **«ԿԻՐ-ՔԱՐ» ՍՊԸ** | 356927652 (Երեք հարյուր հիսունվեց միլիոն ինը հարյուր քսանյոթ հազար վեց հարյուր հիսուներկու դրամ) | 267693750 (Երկու հարյուր վաթսունյոթ միլիոն վեց հարյուր իննսուներեք հազար յոթ հարյուր հիսուն դրամ) | 53538750 (Հիսուներեք միլիոն հինգ հարյուր երեսունութ հազար յոթ հարյուր հիսուն դրամ) | 321232500 (Երեք հարյուր քսանմեկ միլիոն երկու հարյուր երեսուներկու հազար հինգ հարյուր դրամ) |
| 2 | **«Անդրեաս և ընկերներ» ՓԲԸ** | | 282625000 (Երկու հարյուր ութսուներկու միլիոն վեց հարյուր քսանհինգ հազար դրամ) | 56525000 (Հիսունվեց միլիոն հինգ հարյուր քսանհինգ հազար դրամ) | 339150000 (Երեք հարյուր երեսունինը միլիոն հարյուր հիսուն հազար դրամ) |

## 2. ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ՝

1. «ՇՄԱՀ-ԲՄԱՇՁԲ-24/21» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել « **ԿԻՐ-ՔԱՐ** » ՍՊԸ-ին, որպես գնման ընթացակարգի պայմանները բավարարող և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:
2. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:
3. <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն անգործության ժամկետ է սահմանվում 10 օրացուցային օր:

4. Պայմանագիր կնքելու նպատակով անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակցին ծանուցել պայմանագրի նախագիծը և առաջարկել 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում գնման գնի տասը տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ գնման գնի երեսուն տոկոսի չափով՝ "միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի" կամ կանխիկ փողի ձևով:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0:**

**Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները**

*Հանձնաժողովի նախագահ՝* ____________ Հրաչյա Սահրադյան

*Հանձնաժողովի անդամ՝* ____________ Գագիկ Մկրտչյան

*Հանձնաժողովի քարտուղար՝* ____________ Ինգա Մարտիրոսյան